ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«07» սեպտեմբերի 2018 թվականի № 109-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(«Հրաշք Մետաղ» ՍՊ ընկերության տնօրեն Սարգիս Բարսեղյանի նկատմամբ)

Հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից քննված «Հրաշք Մետաղ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված 2018 թվականի օգոստոսի 14-ին թիվ 106-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի արդյունքները.

Պարզվեց, որ «Հրաշք Մետաղ» ՍՊ ընկերությունը ընդերքօգտագործման հետ կապված իր գործունեության վերաբերյալ 2017 թվականի հրապարակային հաշվետվություն ներկայացնելու պարտականությունը չի կատարել և վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից արձանագրությամբ արձանագրվել է այն փաստը, որ մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողը խախտել է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով և ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 666-Ն որոշմամբ սահմանված պահանջները, դրանք են՝

- մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողը կառավարության որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում պարտավոր է թղթային կամ էլեկտրոնային եղանակով լիազոր մարմին և կառավարության աշխատակազմ ներկայացնել տարեկան հրապարակային հաշվետվություն ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ,
- ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 666-Ն որոշման 2-րդ մասի 1-ին կետով սահմանվել է, որ ընդերքօգտագործողները և պետական մարմինները հրապարակային հաշվետվությունները ներկայացնում են ոչ ուշ, քան մինչև հաշվետու տարվա հուլիսի 1-ը, իսկ 2018 թվականին՝ ոչ ուշ, քան մինչև 2018 թվականի օգոստոսի 1-ը:

Այսպիսով, հաստատվել է, որ սույն վարչական գործով առաջացած իրավախախտման համար պատասխանատու է «Հրաշք Մետաղ» ՍՊ ընկերության տնօրեն Սարգիս Բարսեղյանը (հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, Ոսկետափ, Լևոն Շանթի փող., տուն 33, անձնագրային տվյալներ՝ 004029328, տրված 23.09.2014թ., 025-ի կողմից):

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով **Վարչական իրավախախտումների**

վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 14-րդ, 60.[2]-րդ, 242[3], 279-րդ, 281-րդ հոդվածներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ

«Հրաշք Մետաղ» ՍՊ ընկերության տնօրեն Սարգիս Բարսեղյանի (անձնագրային տվյալներ՝ 004029328, տրված 23.09.2014թ.,025-ի կողմից) նկատմամբ նշանակել տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկի չափով՝ 150.000 (հարյուրհիսուն հազար) ՀՀ դրամ:

Տուգանքը վճարել թիվ 900005240818 գանձապետական հաշվին, հրամանը ստանալու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ հրամանը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:

Տուգանքի վճարումն ապացուցող բանկային անդորրագրի պատճենը սեղմ ժամկետում ներկայացնել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության իրավաբանական վարչություն:

Տուգանք նշանակելու մասին վարչական ակտի հարկադիր կատարումն իրականացվում է համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի:

Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ այն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ